



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center for
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության
բարեփոխման նախաձեռնություն

Աշխատանքային փաստաթուղթ 3
Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ
փաստաթղթերի շարք

Բնապահպանական վնասի փոխհատուցում

Դոկտոր Վլադո Վիվոդա

Քուինզլենդի համալսարան

Կայուն հանածոների ինստիտուտ

Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական
պատասխանատվության կենտրոն

Դոկտոր Ջոնաթան Ֆուլչեր

Քուինզլենդի համալսարան

Թ.Ս. Բիրնի անվան իրավաբանության բաժին

Փետրվար 2017

mlri.crm.aua.am

Բնապահպանական վնասի փոխհատուցում

Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆուլչեր (2017)

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք

Աշխատանքային փաստաթուղթ 3

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հիմնաբառեր` Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Փոխհատուցում, Բնապահպանական վնաս

Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելեք` <http://mlri.crm.ava.am>:

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊԿԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելեք` <http://crm.ava.am>:

Ինչպես հղում անել այս զեկույցին

Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Բնապահպանական վնասի փոխհատուցում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 3, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.ava.am>:

Ներածություն

Հանքարդյունաբերությունը պետք է այնպես պլանավորվի, որպեսզի այն երկարաժամկետ ընթացքում առավելագույն օգուտ բերի երկրի բնակիչներին և ունենա նվազագույն սոցիալական ու բնապահպանական ազդեցություն: Սակայն հանքարդյունաբերական գործունեության բացասական սոցիալական և բնապահպանական հետևանքները տեղական համայնքների և շրջակա միջավայրի վրա հաճախ փոխհատուցում են պահանջում: Շինարարական ծախսերը և կառավարությանը վճարելիք գումարները համեմատաբար հեշտ է հաշվարկել, սակայն սոցիալական և բնապահպանական ծախսերը գնահատելը ավելի բարդ, բայց նաև անխուսափելի:

Փոխհատուցումը վերաբերում է ընկերությունների կողմից ազդդակիր համայնքներին տրվող վճարներին կամ այլ նպաստներին, որի նպատակն է փոխհատուցել այն տնտեսական, սոցիալական, բնապահպանական կամ մշակութային վնասի համար, որը հասցվել է հանքարդյունաբերական գործունեության արդյունքում:¹ Բնապահպանական հատուցումը ապահովագրական բնույթ է կրում, որի նպատակն է փոխհատուցել հանքարդյունաբերական գործունեության արդյունքում առաջացած բացասական բնապահպանական հետևանքների համար: «Հատուցում» և «փոխհատուցում» տերմինները կիրառվում են միմյանց փոխարինելով և ներառում են ֆինանսական վճարներ հետևանքների կամ այլ միջոցառումներ, որոնք նախատեսված են այդ հետևանքների դեմ պայթարելու համար: Հատուցումները կարող են լինել՝

- *Հայտնի ներկայացնողի կողմից կառավարվող.* հայտ ներկայացնողը ապահովում և կառավարում է հատուցումը՝ գործածելով ընկերության ներքին ռեսուրսները,
- *Երրորդ կողմից տրամադրված.* հայտ ներկայացնողը կարող է համաձայնության գալ երրորդ կողմի հետ հաշվեկշռի ապահովման հարցում: Սա կարող է ներառել արդեն գոյություն ունեցող այլ հաշվեկշռի գնում, այսպես կոչված, բիոբանկի /biobank/ կամ նմանատիպ կառույցի միջոցով, և
- *Կենտրոնացված և ֆինանսական կառույցի հիմքի վրա.* հայտ ներկայացնողը կարող է մուտքեր կատարել կառավարության կամ այլ գործակալության կողմից տնօրինվող կենտրոնացված հիմնադրամ, որը կիրառվում է թիրախավորված քայլերի օգնությամբ բնապահպանական ռազմավարական արդյունքների հասնելու համար: Կենտրոնացված հաշվեկշռային հիմնադրամները պետք է ապահովվեն բավարար ռեսուրսներով, բարեխղճորեն տնօրինվեն և

¹Տես <http://www.eisourcebook.org/cms/files/attachments/worldbank/9point8-Sharing-Mining-Benefits-in-Developing-Countries.pdf>, էջ 4:

մշտադիտարկվեն, որպեսզի բնապահպանական արդյունքները ստացվեն ու ներկայացվեն հանրությանը:

Այս միջոցառումներից ստացվող շրջակա միջավայրի պաշտպանության արդյունքները նպատակ ունեն փոխհատուցել արդյունաբերական ծրագրի իրականացմամբ պատճառված այն զգալի վնասակար հետևանքների համար: Հատուցումների նպատակն է ստանալ հստակ օգուտ եկոհամակարգի համար:

Առկա իրավիճակը Հայաստանում

Հայկական օրենսդրությունը սահմանում է, որ բնապահպանական ծրագրերի համար նախատեսված գումարները չպետք է լինեն պակաս, քան շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման վճարները, որոնք հավաքագրվում են «երկրորդ, նախորդող բյուջետային տարում»: Գործնականում այս միջոցները միայն մասնակիորեն են օգտագործվում այս նպատակի համար: Բնապահպանական վնասների համար ստացվող փոխհատուցումը ֆինանսական է, կուտակվում է պետական բյուջեում և տնօրինվում է կառավարության կողմից:

Հանքարդյունաբերական ընկերություններից գանձվող բնապահպանական վճարները սուբսիդիաների միջոցով կարող են բաշխվել ազդակի համայնքներին: Միջոցների որոշ մասը վերադարձվում է ազդակիր համայնքներին տեղական մակարդակում սահմանված ներդրումների միջոցով, որոնք նպատակ ունեն բարելավել բնապահպանական պայմանները: Սակայն գումարի չափը ենթակա է հաստատման պետական բյուջեով և շատ հաճախ շրջակա միջավայրի պաշտպանության համար հավաքագրված գումարները ծախսվում են այլ առաջնահերթությունների վրա: Ավելին, հանքի մշակման ընթացքում վերաբնակեցման և փոխհատուցման մասին համաձայնությունները հիմնականում տեղի են ունենում հայտ ներկայացնող ընկերության և իշխանությունների միջև ազդակիր համայնքների բնակիչների սահմանափակ մասնակցությամբ:²

Միջազգային լավագույն փորձ

Հանքարդյունաբերությունից ստացված օգուտները համայնքների հետ կիսելը անհրաժեշտություն է լավագույն փորձ ունեցող վայրերում: Հարկային վճարումներից բացի հողատերերին և ծրագրի ազդեցությունը կրող այլ մարդկանց փոխհատուցման տրամադրումը վարձակալության միջոցով սովորաբար հայտ ներկայացնողի իրավական պարտավորությունն է: Դա օգուտները կիսելու երեք ճանապարհներից մեկն է (մյուս երկուսը՝ կառավարության վճարները և համայնքային/սոցիալական

² Համաշխարհային բանկ (2016թ), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#), ապրիլ, էջ 77:

ներդրումները): Ազդակիր բնակչությանը փոխհատուցումը երբեմն տրվում է դրամային տեսքով, իսկ սոցիալական ու բնապահպանական հետևանքները կարող են լինել բավականին մեծ: Փոխհատուցման գումարների կառավարումն ու բաժանումը կարող է բարդ գործ լինել: Հիմնադրամի առկայությունը կարող է ապահովել համայնքի համար նախատեսված փոխհատուցումների արդյունավետ կառավարում:

Ոչ միայն փոխհատուցման արժեքը պետք է բավարարի ակնկալիքները, այլև դրա ձևը, քանի որ կա արդեն տարածվող կարծիք, որ մեկանգամյա կանխիկ վճարումները պատշաճ ձև չեն: Ընկերությունները և կառավարություններն այժմ մեծ ճնշման են ենթարկվում, որպեսզի հանքարդյունաբերական ծրագրերից ստացվող օգուտները չսահմանափակվեն միայն վնասների դիմաց տրված ֆինանսական փոխհատուցմամբ, այլ դրականորեն նպաստեն հանքարդյունաբերական գործունեության ազդակի համայնքների զարգացմանը: Ազդակիր համայնքների հավանությանն արժանանալու համար, ընկերությունները հաճախ անում են օրենքով պահանջվող քայլերից շատ ավելին՝ համայնքային զարգացման մեջ ներդրումներ կատարելով:

Հատուցումներ

Լավագույն փորձ ունեցող վայրերում, հատուցումները հաճախ կիրառվում են հանքարդյունաբերական գործունեության արդյունքում կորսված կենսաբազմազանության փոխհատուցման համար:³ Հատուցումները կենսաբազմազանությունը կառավարելու պատասխանատվությունը փոխանցում են հողատարածքի մեկ այլ հատված: Դրանք ներառում են թիրախային գործողություններ, որոնց նպատակն է կենսաբազմազանության արժեքների վրա զգալի մնացորդային հետևանքների փոխհատուցումը, որը կատարվում է «խուսափել-նվազեցնել-մեղմել» շրջակա միջավայրի կառավարման հիերարխիայից հետո:⁴ Այս հաջորդականության դեպքում հատուցումները դառնում են պահպանության միջոցառումների հիերարխիայի չորրորդ օղակը, որը դիտարկվում է միայն այն դեպքում, երբ ուսումնասիրվել են տեղամասի վրա բնապահպանական վնասից խուսափելու կամ դրա մեղմման ուղղված բոլոր ողջամիտ գործողությունները:⁵

Մարման որևէ գործողություն պետք է լինի լրացուցիչ, օրենքով արդեն սահմանված պահանջներից զատ: «Լրացուցիչ» լինելու մասին պահանջը պետք է հիմնված լինի հստակ չափանիշների վրա, որպեսզի հատուցումները չհաստատվեն միևնույն դրանք չապահովեն արդեն նախատեսվածից բացի լրացուցիչ բնապահպանական օգուտ:

³Տես՝<http://www.icmm.com/publications/pdfs/4934.pdf>:

⁴Տես՝http://www.minerals.org.au/leading_practice/sustainable_development/biodiversity_offsets_policy/:

⁵Goodland R. (2012թ):[Responsible Mining: The Key to Profitable Resource Development: Sustainability](#), հատոր4, էջեր2099-2126:

Փոխհատուցման ցանկացած հատուցում պետք է շրջակա միջավայրը թողնի ավելի լավ վիճակում, քան այն կար նախքան արդյունաբերական ծրագիրը: Տարածքը ավելի լավ վիճակում է գտնվում, եթե կա “շահագրգիռ կողմերի միջև համաձայնություն առ այն, որ առաջարկվող հատուցումը ավելի ընդարձակ է, ավելի մեծ բնապահպանական արժեք ունի, Էկոհամակարգի ավելի բարձր գործառնություն է ապահովում և տրամադրվում է ավելի անվտանգ պաշտպանվածության մակարդակով, ինչպես օրինակ անժամկետ ֆինանսավորման միջոցով:⁶

Հաշվի առնելով այն, որ հատուցումների նպատակը առնվազն առանց զուտ կորուստների իրավիճակի հասնելը և հաճախ բնապահպանական օգուտ ստեղծելն է, մարման չփորձված ձևերը չեն կարող աղեկվատ լինել, քանի որ հավանական չէ, որ նրանք հանգեցնեն կայուն Էկոլոգիական արդյունքների: Լավագույն փորձ ունեցող տարածքներում առանց կորուստների իրավիճակ ունենալը համարվում է շատ համեստ նպատակ, և «կենսունակության պահպանման» կամ «զուտ կորուստներ չունենալու» պահանջների փոխարեն օրենսդրորեն պահանջվում է, որպեսզի մարման համակարգերը պահպանեն կամ բարելավեն բնապահպանական արդյունքները: Հատուցումների համար լավագույն փորձը կլինի այն, որ Էկոհամակարգն ունենա զգալի զուտ շահույթ: Այլ կերպ ասած՝ կորսված գոտու՝ տարածքը, արժեքը և այլն, բազմապատկվում է ավելի քան մեկ, սովորաբար երեք, բայց տասից փոքր «փոքր բազմապատկով»: Եվրոպական Միության՝ «գրոյական զուտ կորուստներ» նախաձեռնության զարգացման շրջանակներում հետևողականորեն փորձ է արվում փոխհատուցումը և հատուցումը խարսխել մեղմացման խիստ հիերարխիայի ներքո: Այլ կերպ ասած՝ հատուցումը և փոխհատուցումը պետք է լինի ծայրահեղ միջոցառում, որը թույլ չի տա, որպեսզի մոռացվի, որ բացասական ազդեցություններից խուսափումը և դրանց կանխարգելումը առաջնային խնդիր է:⁷ Բայցևայնպես, ԵՄ քաղաքականությունը չի խրախուսում զուտ շահույթը: Փոխարենը՝ ԵՄ-ն մշակել է պլանավորման մի համակողմանի մեխանիզմ, որը կոչվում է կանաչ ենթակառուցվածք: Այն նախատեսում է տարածաշրջանային պլանավորման գործընթացում ավանդական ենթակառուցվածքների ողջամիտ և գործնականում հնարավոր փոխարինում կանաչ ենթակառուցվածքներով՝ հանրային և մասնավոր տարածքները վերանախագծելիս: Պլանավորման այսպիսի մեթոդը կարող է հատկապես օգտակար լինել Հայաստանի նման փոքր երկրներում, քանի որ դա կարժևորի կանաչ տարածքները: Անուղղակի հատուցումների գործածումը լավագույն փորձ ունեցող տարածքներում նվազագույն է: Սա պայմանավորված հետևանքների հետ կապի անորոշության հետ և ավելի մեծ ռիսկի հետ այն առումով, որ կենսաբազմազանության արդյունքների հասնելը հնարավոր է չստացվի: Այնուամենայնիվ, հատուցումները արդյունահանման ծրագրին հարող

⁶ Goodland (2012թ.):

⁷ Stu՝ http://ec.europa.eu/environment/nature/biodiversity/nnl/index_en.htm

տարածքում սովորաբար ավելի մեծ արժեք ունեն համայնքների և շրջակա միջավայրի պահպանության համար, քան հանքարդյունաբերական գործունեության արդյունքում ուղղակիորեն ազդեցություն կրող տարածքների վերականգման վրա կատարվող զգալի ծախսերը: Հատուցումների տարածքները հիմնականում ունեն անժամկետ իրավական պաշտպանվածություն և կառավարում, քանի որ հանքի մշակման հետևանքնը մշտական է: Քանի դեռ կենսաբազմազանության հատուցումները պատշաճ իրավական մեխանիզմներով չեն պաշտպանվել, դրանց բնապահպանական արդյունքները կշարունակեն մնալ անորոշ: Ավելին, մարման սխեմաները առավելագույնս արդյունավետ են լինում, երբ դրանք հենց սկզբից ուղեկցվում են կիրարկման մեխանիզմներով և պատշաճ կանոնակարգմամբ:

Ածխածնի հատուցում

Ջերմոցային գազերի արտանետումների /ՋԳԱ/ ներկա բարձր մակարդակի պարագայում հատուցումների հստակ տարբերակ կարող է լինել այն, երբ հանքարդյունաբերող ընկերությունը նպատակ է դնում իրականացնել ածխածնաչեզոք նախագիծ: Ածխածնաչեզոք դառնալու համար ընկերությունը պետք է հաշվարկի հանքի ողջ գործունեության ընթացքում ակնկալվող ՋԳԱ ծավալը, այնուհետև տնկել և պահպանել պահանջվող թվաքանակով ծառեր՝ նպատակ ունենալով չեզոքացնել հավասար ծավալով ՋԳԱ: Այսպիսով կարբոնային հատուցումը կարող է լինել ծառատունկ կամ խաթարված անտառի վերականգնումը կիսաբնական անտառի: Ծառերը ցանկալի է, որ լինեն տեղանքին հատուկ ծառեր՝ տնկված նախկինում ծառախիտ հողատարածքում: Տեղական բնակչության աջակցությունը կանոր է, քանի որ նրանք հաճախ կարող են վերապատրաստված անտառային մասանգետներ լինել:

Կենսաբազմազանության հատուցում

Եթե հանքը ի վիճակի չէ խուսափել, օրինակ, 20կմ քառակուսի անտառի փոխակերպումից այլ օգտագործման նպատակով, ապա կենսաբազմազանության հատուցում կարող է լինել մոտակա հարևանությամբ գտնվող մեկ այլ անտառի՝ կորսված 20ք/կմ-ի փոքր բազմապատիկի չափով տարածքի անժամկետ պահպանումը: Իմաստն այստեղ այն է, որ երկու տարածքներն միմյանց նման են էկոհամակարգով, կենսաբազմազանությամբ, ածխածնի չեզոքացման կարողությամբ, պայմաններով և այլն:

«Թղթե այգին» նախագիծն իրականացնող ընկերության կողմից մարման ֆինանսավորման միջոցով կարելի է վերածել շրջակա միջավայրի պահպանության կենսական միավորի: Գոյություն ունեցող պահպանման կենսական միավորին մոտ հարևանությամբ գտնվող տարածքի գնման միջոցով նշված բնապահպանական

միավորը հզորացնելն ավելի ծախսարդյունավետ է, քան շրջակա միջավայրի պահպանության նոր միավոր ստեղծելը: Շրջակա միջավայրի պահպանության միավորների միջև բուֆերային գոտիների ներառումը կամ ավելացումը կամ այդ միավորների միջև միջանցքային գոտիների պահպանումը նույնպես կարող է լինել ծախսարդյունավետ:

Խաթարված տարածքի վերականգնումը և բերումը կորսված էկոհամակարգին մոտ կարգավիճակի կարող է արժեքավոր հատուցում հանդիսանալ: Այստեղ նպատակը կլինի խաթարված տարածքի վերականգնումը որպես ամբողջապես գործող, կայուն էկոհամակարգ՝ այն նույն գործառնություններով, այդ թվում՝ կենսաբազմազանությամբ, ինչ շրջակա տարածքը կամ հանքարդյունաբերության արդյունքում կորսված տարածքը:

Հատուցումները Ավստրալիայում

Լավագույն փորձ ունեցող 14 վարչական տարածքներում հատուցումները պարտադիր իրավական պահանջ են: Առնվազն 15 տարածքում կանոնակարգմամբ, որը հաճախ կապված է լինում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ, առաջարկվում կամ աջակցություն է ցուցաբերվում հատուցումների կիրառմանը: Ավստրալիան ունի մարման վերաբերյալ խիստ հզոր քաղաքականություն, մշակված ուղեցույցներ և իրականացման մեխանիզմներ:⁸

Հատուցումները Ավստրալիայում ավելի տարածված են դարձել որպես հանքարդյունաբերությանն աջակցելու միջոց, որն ի դեպ կարող էր մերժվել կենսաբազմազանության վրա անընդունելի ազդեցությունների պատճառով:⁹ Ավստրալիայում բնապահպանական դաշնային որոշումները կայացվում են *1999թ-ի Շրջակա միջավայրի պաշտպանության և կենսաբազմազանության պահպանության ակտի* /ՇՄԿԴ ակտ/ շրջանակներում, որը վերաբերում է նաև հանքարդյունաբերական գործունեությանը: *ՇՄԿԴ ակտը, Բնապահպանական հատուցումների քաղաքականությունը* և *Հատուցումների գնահատման ուղեցույցը* բացատրում են, թե ինչպես պետք է սահմանել հատուցումները բնապահպանության մասին ազգային օրենքով պաշտպանով դեպքերի համար: *ՇՄԿԴ ակտով* հաստատման ենթակա առաջարկվող գործողությունների մեծ մասը պետք է նաև հաստատվեն ավստրալական համապատասխան նահանգի կամ տարածքային իշխանության կողմից, նախքան գործունեության ծավալումը:

⁸ Տես՝ <http://www.icmm.com/publications/pdfs/4934.pdf>, էջ 13:

⁹ Տես՝

http://www.nela.org.au/NELA/Documents/Fundamental_Principles_for_Best_Practice_Biodiversity_Offsets.pdf.

Բնապահպանական հատուցումների քաղաքականությամբ սահմանվում է, որ հատուցումները պետք է ուղղակիորեն կապ ունենան առաջարկվող գործունեության հետևանքների հետ: Իսկ ավելի գործնական իմաստով՝ հատուցումները կարող են ներառել ռիսկային բնապահպանական ակտիվների պաշտպանություն, վտանգված կենդանատեսակների բնական միջավայրի վերականգնում կամ ընդլայնում կամ ժառանգության վայրի արժեքների բարելավում: Զաղաքականության գլխավոր հինգ նպատակներն են՝

- Ապահովել հատուցումների որակյալ, արդյունավետ, ժամանակին արվող, թափանցիկ, համաչափ, գիտականորեն հիմնավորված և ողջամիտ կիրառում:
- Արդյունահանման հայտ ներկայացնողների, համայնքի և այլ շահագրգիռ կողմերի համար ապահովել առավել մեծ վստահություն և ուղեցույցներ հատուցումների սահմանման և դիտարկման ժամկետների վերաբերյալ:
- Զաղաքականության հետևողական կիրառման միջոցով հասնել կատարելագործված բնապահպանական արդյունքների:
- Ուրվագծել հատուցումների պատշաճ բնույթն ու ծավալը և դրանց սահմանման կարգը, և
- Ապահովել հատուցումների տրամադրման ընդունելի մեխանիզմների մասին ուղեցույցներ:¹⁰

Զաղաքականությունը նաև սահմանում է մի շարք սկզբունքներ, որոնք կիրառվում են հատուցումների համապատասխանությունը որոշելու համար: Համապատասխան հատուցումները՝

- Պետք է ստեղծեն շրջակա միջավայրի պահպանության այնպիսի արդյունքներ, որոնք բարելավում կամ պահպանում են առաջարկվող գործողության ազդակիր տարածքները և բնապահպանության մասին օրենքով պաշտպանվող շրջակա միջավայրի կենսունակությունը:
- Պետք է կենտրոնանան ուղիղհատուցումների վրա, սակայն կարող են ներառել փոխհատուցման այլ միջոցառումներ:
- Պետք է համաչափ լինեն պահպանության ենթակա տարածքին վերաբերող կանոնադրական պաշտպանության մակարդակին:
- Պետք է լինեն պաշտպանության ենթակա տարածքի վրա մնացորդային ազդեցությանը համապատասխան չափով և ծավալով:
- Պետք է հաշվարկեն և կառավարեն հատուցումների՝ հաջողության չհասնելու ռիսկերը:

¹⁰ Ավստրալիայի կառավարություն, [Environment Protection and Biodiversity Conservation Act 1999 Environmental Offsets Policy](#), հոկտեմբեր, 2012թ, էջ 6:

- Պետք է լինեն օրենքով կամ պլանավորման կարգավորումներով սահմանված կամ պլաններով ու ծրագրերով համաձայնեցված պահանջներից գատ լրացուցիչ միջոցառում:
- Լինեն որակյալ, արդյունավետ, ժամանակին արվող, գիտականորեն հիմնավորված և ողջամիտ: Ունենան թափանցիկ կառավարման մասին համաձայնություններ, այդ թվում՝ չափումների, մշտադիտարկման և ստուգման ենթարկվելու պատրաստակամություն:¹¹

Քաղաքականության փաստաթղթի մեջ նշվում է, որ «հատուցումների փաթեթը գործողությունների խումբ է, որը հայտ ներկայացնողը ստանձնում է՝ նպատակ ունենալով փոխհատուցել ծրագրի մնացորդային հետևանքների համար»:¹² Այս գործողությունները կարող են ներառել «ուղիղհատուցումների» շարք կամ «փոխհատուցման այլ գործողություն/անուղղակի հատուցումներ»: Հատուցումների մասին պահանջների առնվազն 90%-ը պետք է ապահովվեն ուղիղհատուցումների միջոցով: Ուղիղհատուցումները սահմանվում են որպես գործողություններ, որոնք ապահովում են ազդակիր տարածքի համար շրջակա միջավայրի պահպանության չափելի օգուտ: Շրջակա միջավայրի պահպանության օգուտը այն արդյունքն է, որը ուղիղ հատուցումը ապահովում է պահպանության ենթակա տարածքի համար՝ պահպանելով կամ զարգացնելով վերջինիս կենսունակությունը կամ նվազեցնելով վնասի, քայքայման կամ վերացման ռիսկը:¹³ Օրինակները ներառում են՝

- Բարելավել պաշտպանման ենթակա առարկայի բնական միջավայրը
- Ստեղծել նոր բնական միջավայր պաշտպանվող առարկայի համար
- Նվազեցնել պաշտպանվող առարկային սպառնող վտանգները
- Բարձրացնել ժառանգության վայրի արժեքը, և/կամ
- Խուսափել վտանգի տակ գտնվող պաշտպանման ենթակա առարկայի կամ նրա բնական միջավայրի կորստից:

Ուղիղ հատուցումները կարող են նաև ներառել՝

- Նոր բնական միջավայրի բարելավում կամ ստեղծում վերականգնողական և ռեգեներացման աշխատանքների միջոցով:
- Իրականացնելով վայրի կենդանիների վերահսկման ծրագրեր, որոնք կնվազեցնեն կոնկրետ վտագված կենդանիների հոշոտումը այլ կենդանիների կողմից:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 8:

¹³ Նույն տեղում:

- Կենդանիների գերեվարմամբ դրանց բուժման և բացթողնման ծրագրերի միջոցով կենդանատեսակների թվի աճի խթանում:
- Ժառանգության վայրի կամ միջազգային նշանակության ջրային տարածությունների արժեքը բարձրացնող գործողությունների ձեռնարկում, ինչպիսին կարող է լինել, օրինակ, գետաբերանի ջրի որակը բարելավելու նպատակով ջրի հոսանքն ի վեր կատարվող գործողությունների կառավարում:

Փոխհատուցման այլ միջոցառումները (կամ անուղղակի հատուցումները) սահմանվում են որպես գործողություններ, որոնք ուղղակիորեն չեն հատուցում թողնված ազդեցության հետևանքը, սակայն ակնկալվում է, որ իրենց նպաստը կբերեն պաշտպանության ենթակա տարածքին/առարկային, օրինակ՝ կրթական կամ հետազոտական ծրագրերի ֆինանսավորում:¹⁴

Քաղաքականությունը նաև խրախուսում է «կանխավ հատուցումները» որպես պաշտպանության ենթակա տարածքի համար պահպանման օգուտն ուշ ստանալու հետ կապված ռիսկերի կառավարման միջոց: Կանխավ հատուցումները հատուցումներ են ապագայում հավանական օգտագործման, փոխանցման կամ վաճառքի համար, օրինակ՝ նախքան արդյունաբերական ազդեցության առկայությունը շրջակա միջավայրի պաշտպանության կամ բարելավում իրականացնելու համար:¹⁵

Հատուցումների գնահատման ուղեցույցը որոշումների կայացմանն աջակցող գործիք է, որն օգտագործվում է դաշնային բնապահպանական իշխանության կողմից թափանցիկ և հետևողական կերպով հատուցումների համապատասխանությունը որոշելու համար: Ուղեցույցն ընդգրկում է հատուցումների հետ կապված լավագույն փորձի սկզբունքները, որոնք նշված են հատուցումների քաղաքականության փաստաթղթում: Այն տևական ժամանակ բազմաթիվ շահագրգիռ կողմերի համար քննարկման թեման է հանդիսացել: Ուղեցույցը հասանելի է հանրության համար և կարող է կիրառվել համապատասխան շահագրգիռ կողմերի կողմից պլանավորման նպատակների համար բնապահպանական գնահատում իրականացնելիս:¹⁶

Ուղեցույցը կիրառում է ազդեցությունների և հատուցումների մասին կոնկրետ ինֆորմացա հաշվարկելու համար, թե արդյոք առաջարկվող հատուցումը պատշաճ կերպով փոխհատուցում է ներկայացված գործունեության մնացորդային ազդեցության համար: Ծրագիրը թույլ է տալիս օգտատիրոջը ներմուծել ազդեցությունների և հատուցումների մասին տվյալների մեծ խումը, այդ թվում՝ (1) ներկայացված գործունեության ծավալը և բնույթը, (2) առաջարկվող մարման ծավալն ու բնույթը, (3) և

¹⁴ Նույն տեղում, էջ 9:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Տես՝ <https://www.environment.gov.au/system/files/resources/12630bb4-2c10-4c8e-815f-2d7862bf87e7/files/offset-assessment-guide.xlsx>:

առաջարկվող մարման հետ կապված ռիսկերը: Ծրագրի կարևոր գործառնություններից մեկն այն է, որ հաշվարկվում են շրջակա միջավայրի պահպանության օգուտի ուշացումները:

Հատուցում ստեղծելու, ինչպես նաև դրա ընթացիկ կառավարման և մշտադիտարկման համար պահանջվում են ընդհանուր ծախսեր, որոնք կախված են մարման բնույթից: Այնտեղ, որտեղ առկա են տվյալներ առաջարկվող հատուցման ծախսերի մասին, դրանք ներմուծվում են ուղեցույցի մեջ: Տվյալներն այնուհետև կարող են օգտագործվել հաշվարկելու համար փոխհատուցման այլ միջոցառումներ, որտեղ այդ միջոցառումները հատուցումների մասին առաջարկի մաս են կազմում:

Յուրաքանչյուր առաջարկ դիտարկվում է առանձին՝ հաշվի առնելով առաջարկի ազդեցությունների մասշտաբն ու ինտենսիվությունը և որակյալ արդյունքներ ապահովելու համար հատուցումների ներուժը: Հատուցումները չեն նշանակում, որ անընդունելի հետևանքներ ունեցող առաջարկները հաստատվելու են: Նրանք պարզապես լրացուցիչ գործիք են ապահովում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի ժամանակ:¹⁷

Կանոնակարգող մարմինն ունի մշտադիտարկման և ստուգման ծրագիր, որպեսզի հաստատման պայմանները արդյունավետ կերպով իրականացվեն: Հաստատման պայմանների խախտումները, այդ թվում՝ հատուցումների հետ կապված, կարող են հանգեցնել լուրջ տուգանքների: Որպես ընթացիկ մշտադիտարկման մաս ծրագրի հայտը ներակայցնող ընկերությունը պարտավոր է տրամադրել տեղեկություն մարման կառավարման մասին: Այն կարող է ներառել տվյալներ բուսական և կենդանական աշխարհի, ջրի որակի մասին, կենդանիների բուծման հետ կապված և այլ տեղեկություններ՝ ելնելով ազդեցության բնույթից և Հաստատման պայմաններում նշված հատուցումների մասին պահանջներից:

Եզրակացություններ և առաջարկություններ

Իշխանությունները ավելի շատ հետաքրքրված են կենսաբազմազանության հատուցումներով, քան բնապահպանական փոխհատուցումների այլ ձևերով, քանի որ հատուցումները շոշափելի են, չափելի և երկարաժամկետ: Շատ վայրերում կառավարության քաղաքականությունը հատուցումները դիտարկում է որպես հանքի մշակումն ու շրջակա միջավայրի հարցերը հավասարակշռելուն ուղղված կառավարության նպատակներին համնելու համար պահանջվող գործիք: Արդեն երկար տարիներ և հատկապես վերջին տասնամյակում շատացել է հատուցումներին առնչվող օրենսդրության ընդունումը: Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային

¹⁷ *Բնապահպանական հատուցումների քաղաքականություն:*

խորհրդի /ՅՄՄԻ/ Կենսաբազմազանության հատուցումների մասին պեկույցը նկարագրում է կենսաբազմազանության կորուստների և օգուտների փոխանակման և չափման կարևոր գլխավոր մոտեցումը (չորս քայլանի մեթոդ)՝ հիմնված համաշխարհային լավագույն փորձի վրա: Դրա կիրառումը ցույց է տրվում կառավարության կարգավորումների և դեպքային ուսումնասիրությունների վրա հղումներ կատարելով: Չեկույցը նաև նկարագրում է կանոնակարգվող և կամավոր ռեժիմներում հատուցումների իրականացումը, այդ թվում՝ իրականացման մեխանիզմները, ծառայություններ մատուցող ընկերությունների առկայությունը և հատուցումների համար արդեն պաշտպանվող տարածքների ներուժն օգտագործելու համար:¹⁸

Մինչ հատուցումը որպես տարբերակ դիտարկելը պետք է բոլոր ճիգերը գործադրվեն շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերական նախագծերի ազդեցություններից խուսափելու և ապա դրանք մեղմելու ուղղությամբ: Մեղմման գործողությունների այս հաջորդականությունը պետք է հստակորեն ամրագրվի համապատասխան օրենսդրության մեջ որպես պարտադիր նախապայման նախքան մարման որևէ տարբերակի քննարկում: Հայտ ներկայացնող ընկերություններին պետք է տեղեկություն տրամադրվի այն մասին, թե ինչպես պետք է ցուցադրել հանքի առաջարկվող մշակման ազդեցությունից իրապես խուսափելուն և այն նվազեցնելուն ուղղված իրենց ջանքերը:

Հայաստանում մարտահրավերներից է շարունակում մնալ գործող ազդակիր համայնքներին որոշումների կայացմանը և ազդեցության գնահատումներին մասնակցելու հնարավորություն ընձեռելը, ինչը սահմանված է գործող օրենսդրությամբ:¹⁹ Կառավարությունը և հայտ ներկայացնող ընկերությունները պետք է միասին խրախուսեն ազդակիր համայնքների և քաղաքացիական հասարակության ավելի լայն շրջանակի համար կարողությունների զարգացման և վերապատրաստման նախաձեռնությունները: Կարողությունների զարգացման նախաձեռնությունները կարող են նպաստել մասնակցությանը ծրագրի պլանավորման և մշտադիտարկման գործում, ինչպես նաև վերբնակեցման ու փոխհատուցման շուրջ բանակցություններում, որն արդյունքում կհանգեցնի սոցիալական կոնֆլիկտի կանխմանը:

¹⁸ Տես՝ <http://www.icmm.com/publications/pdfs/4934.pdf>:

¹⁹ Համաշխարհային բանկ (2016թ), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#), ապրիլ, էջ 83:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Մարշալ Բաղրամյան 40,
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
+374-60-612520
crm@aua.am
crm.aua.am

mlri.crm.aua.am

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION